

«2012թ. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԽԱՂ» ՄՐՑՈՒՅԹ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ (ԱՐԲԻՏՐՆԵՐԻ) ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան 2012

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Խնդրի համառոտ նկարագրությունը ըստ ժամանակագրության	3
2. Կողմերի պահանջները.....	6
3. Բանավոր փուլի ընթացակարգը	7
4. Բանավոր փուլի կարևոր կանոնները.....	8

1. ԽՆԴՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ

Այս տարվա խնդիրը նկարագրում է մի մտացածին վեճ, որը ծագել է գերմանական դեղագործական կազմակերպության՝ «AIZNAL» GmbH (Հայցվոր) և Հայաստանում գրանցված մի ընկերության՝ «Ինիկուս» ՍՊԸ-ի միջև (Պատասխանող):

- 1905թ.-ից սկսած՝** Հայցվորը զբաղվում է դեղերի արտադրությամբ:
- 1991-2011թթ.՝** Հայցվորը իր դեղերի և վիտամինների, այդ թվում «FLEGON» և «AIZNAL» ապրանքային նշաններով վիտամինների համար արտոնագրեր (պատենտ) է ստացել Եվրոմիության 27 պետություններում, ինչպես նաև՝ ԱՄՆ-ում, Ավստրալիայում և Ճապոնիայում:
- 1991թ.-ից սկսած՝** FLEGON տեսակի վիտամինները բավականին հայտնի դարձան նաև Հայաստանում՝ տվյալ տեսակի վիտամիններից օգտվողների շրջանակում:
- 1993թ.-ից սկսած՝** Չինաստանում և Հնդկաստանում ջեներիկ (generic) վիտամիններ արտադրող ընկերությունները սկսեցին մեծ ծավալով արտադրել և սպառել FLEGON վիտամինը տարբեր ապրանքային նշաններով՝ առանց օգտագործելու «FLEGON» կամ «AIZNAL» ապրանքային նշանները:
- 1993թ.-ի վերջեր՝** Պատասխանողը Հայաստանում սկսեց զբաղվել FLEGON վիտամինի արտադրությամբ:
- 1994թ. հունիսի դրությամբ՝** Պատասխանողը վաճառել էր ընդամենը 58 վիտամին, մինչդեռ արդեն հասցրել էր արտադրել 10,000-ից ավել վիտամին՝ դրանք արագ սպառելու հույսով:
- 1995թ.-ի մայիս՝** Պատասխանողը կարողացավ գրանցվել «AIZNAL» և «FLEGON» բառային ապրանքային նշանները՝ ԱՕՄԴ-ի 5-րդ դասով:
- 2005թ.-ի դեկտեմբեր՝** «AIZNAL» և «FLEGON» անունները օգտագործելու արդյունքում Պատասխանողը սպառել էր իր վիտամինների ավելի քան 90% (տոկոսը) և մի քանի անգամ ավելացրեց իր արտադրության ծավալները:

- 2006թ.-ից սկսած՝** Պատասխանողը Ռուսաստանում և ԱՊՀ բոլոր այլ երկրներում գրանցեց «AIZNAL» և «FLEGON» բառային ապրանքային նշանները և սկսեց արտահանել ու սպառել իր FLEGON վիտամինը նաև այդ շուկաներում:
- 2009թ.՝** Հայցվորը տեղեկացավ Պատասխանողի վերոգրյալ գործողությունների մասին:
- 2010թ.՝** Հայցվորը դիմեց ՀՀ մտավոր սեփականության գործակալություն «AIZNAL», «FLEGON» և իր հինգ այլ ապրանքային նշանները գրանցելու համար, սակայն «AIZNAL» և «FLEGON» ապրանքային նշանների գրանցումը մերժվեց՝ Պատասխանողի կողմից ավելի վաղ գրանցած նույնական նշանների առկայության հիմքով: Հայցվորի խնդրանքով Գործակալությունը անցկացրեց կրկնական փորձաքննություն, սակայն չփոխեց իր նախկին դիրքորոշումը:
- 2011թ.-ի մայիս՝** Հայցվորը Պատասխանողից պահանջեց դադարեցնել «AIZNAL» և «FLEGON» ապրանքային նշանների օգտագործումը ԱՊՀ ողջ տարածքում: Պատասխանողը որևէ կերպ չարձագանքեց Հայցվորի այս պահանջին:
- 2011թ.-ի հունիս՝** Հայցվորը ԱՊՀ ողջ տարածքում գործող գրեթե բոլոր հանրային հեռուստատառադիո ընկերությունների միջոցով տարածեց, որ Պատասխանողի կողմից վաճառվող «AIZNAL» և «FLEGON» ապրանքային նշանները կրող բոլոր վիտամինները վտանգավոր են առողջության համար: Ի պատասխան Հայցվորի վերոգրյալ հայտարարություններին, Պատասխանողը լրատվության նույն միջոցներով պատասխանեց, որ Հայցվորը պարզապես նախանձում է և ցանկանում է խափանել Պատասխանողի օրինական գործունեությունը: Հայցվորի հայտարարություններին արձագանքեց նաև Հայաստանի ոստիկանությունը, մամլո ասուլիսներից մեկի ժամանակ պարզաբանելով, որ ՀՀ օրենսդրության համաձայն, ոստիկանությունը կարող է ձեռնարկել օրենքով նախատեսված համապատասխան միջոցներ ենթադրյալ իրավախախտների դեմ, միայն հեղինակային իրավունքների կամ ապրանքային նշանի

իրավատիրոջ կամ վերջինիս հայաստանյան ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա և նման դիմումի առկայության դեպքում ոստիկանությունը պատրաստ կլիներ ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան միջոցներ:

2011թ.-ի հուլիսից սկսած՝

Պատասխանողը դադարեցրեց իր վիտամինների հետ որևէ CD-ի տրամադրումը՝ փոխարենը տրամադրվով տպագրված տեղեկատվություն: Հայաստանում վաճառվող վիտամինների հետ այս տեղեկատվությունը տրվում էր հայերեն լեզվով: Պատասխանողի կողմից տրամադրվող այս տեղեկատվության 25 (քսանհինգ) տոկոսը համընկնում է Հայցվորի Ծրագրում առկա տեղեկատվության հետ:

2011թ.-ի հուլիսի վերջերն՝

Հայցվորն անարգել մուտք գործեց հայկական շուկա իր ողջ ապրանքատեսակով (այդ թվում «AIZNAL» և «FLEGON» ապրանքային նշաններով): ՀՀ մաքսային մարմինները որևէ արգելք չստեղծեցին Հայվորի համար, քանի որ Պատասխանողը նախապես, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, դիմում չէր ներկայացրել ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ ՀՀ մաքսային մարմինների կողմից իր մտավոր սեփականության օբյեկտների գրանցման վերաբերյալ, ուստի՝ ՊԵԿ-ի մտավոր սեփականության օբյեկտների գրանցամատյանում որևէ գրառում չկար Պատասխանողի ապրանքային նշանների վերաբերյալ:

2011թ.-ի սեպտեմբեր՝

մտավոր սեփականության իրավունքների խախտման վերաբերյալ մի շարք փոխադարձ մեղադրանքներ ներկայացնելուց հետո, Հայցվորը և Պատասխանողը եկան ընդհանուր համաձայնության, այն է՝ իրենց միջև առկա տարաձայնությունների լուծումը հանձնել առևտրային արբիտրաժին:

Պատասխանողը պարտավորվել է դադարեցնել վիճարկվող ապրանքային նշանների օգտագործումը, եթե արբիտրաժը վճռի, որ Պատասխանողը խախտել է Հայցվորի Հայաստանում ունեցած իրավունքները և (կամ) այլ օրինական շահերը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

ՀԱՅՑՎՈՐԸ խնդրում է վճռել, որ.

1. խախտել է և շարունակում է խախտել Հայցվորի հեղինակային իրավունքները,
2. անբարեխիղճ եղանակներով ձեռք է բերել Հայցվորի ապրանքային նշանները Հայաստանում օգտագործելու իրավունք և պարտավոր է դադարեցնել այդ նշանների օգտագործումը,
3. անբարեխղճորեն մրցակցում է Հայցվորի հետ հայկական շուկայում՝ վերոգրյալ 2-րդ կետում նշված իրավախախտման հետևանքով:

ՊԱՏԱՍԽԱՆՈՂԸ, հակադրվելով Հայցվորի վերոգրյալ պահանջներին, խնդրում է վճռել, որ.

1. Պատասխանողը երբևէ չի խախտել և չի խախտում Հայցվորի որևէ հեղինակային իրավունք,
2. Հայցվորը խախտում է Պատասխանողի իրավունքները՝ օգտագործելով Հայաստանում գրանցված Պատասխանողի ապրանքային նշաններին նույնական նշաններ, և
1. Հայցվորն անբարեխղճորեն մրցակցում է Պատասխանողի հետ հայկական շուկայում:

3. ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Յուրաքանչյուր փուլին մասնակցում է 3 (երեք) դատավոր (արբիտր):

Յուրաքանչյուր թիմի ելույթի համար տրամադրվում է առավելագույնը 40 (քառասուն) րոպե ժամանակ, որից առավելագույնը 5 (հինգ) րոպեն պետք է օգտագործվի պնդումների կամ առարկությունների համար:

Թիմի միայն 2 (երկու) անդամ կարող են հանդես գալ բանավոր ելույթի ժամանակ: Մրցույթի յուրաքանչյուր փուլում թիմի 1 (մեկ) լրացուցիչ անդամ կարող է երկու բանախոսների հետ նստել խորհրդատվական սեղանի շուրջ՝ որպես իրավական հարցերով խորհրդատու: Որպես խորհրդատու հանդես եկող անձը պետք է լինի տվյալ թիմի գրանցված անդամներից մեկը: Մրցույթի տարբեր փուլերում որպես խորհրդատու կարող են հանդես գալ նույն թիմի տարբեր անդամներ:

Յուրաքանչյուր մրցափուլում բանավոր ելույթների հերթականությունը հետևյալն է՝ ելույթ է ունենում 1-ին Հայցվորը, որին հաջորդում է 2-րդ Հայցվորի ելույթը: Այնուհետև, նույն հերթականությամբ ելույթ են ունենում 1-ին և 2-րդ Պատասխանողները, որից հետո Հայցվորներից մեկը ներկայացնում է իր թիմի պնդումները, իսկ Պատասխանողներից մեկն իր թիմի առարկությունները:

Ժամանակի ճշգրիտ պահպանմանը պետք է հետևի Մրցույթի կազմակերպիչների կողմից նշանակված հատուկ անձը:

Ժամապահի պարտականությունների մեջ է մտնում յուրաքանչյուր 5 (հինգ) րոպեն լրանալուն պես ելույթ ունեցող մասնակցին և արբիտրներին տեղեկացնել, թե որքան ժամանակ է մնացել մինչև ելույթի ավարտը:

Թիմի մասնակիցներից որևէ մեկի չօգտագործված ժամանակը չի կարող օգտագործվել թիմի մյուս մասնակցի կողմից:

Թիմերը կարող են դատավորներին (արբիտրներին) դիմել իրենց ելույթի համար նախատեսված ժամանակը երկարացնելու խնդրանքով:

Արբիտրներից յուրաքանչյուրն, անհրաժեշտության դեպքում, իր հայեցողությամբ և նախաձեռնությամբ կարող է երկարաձգել որևէ թիմի ելույթի ժամանակը՝ առավելագույնը 10 (տաս) րոպեով՝ պայմանով, որ նույնքան ժամանակ ավելացվում է նաև հակառակորդ թիմի ելույթի համար:

Ելույթի ընթացքում մասնակիցները պետք է շփվել միմիայն արբիտրների հետ:

Բանավոր ելույթի ժամանակ թիմի մասնակից անդամները ոչ նախագահող արբիտրներին պետք է դիմեն «հարգելի արբիտր», իսկ նախագահող արբիտրին «հարգելի նախագահող»:

Թիմերի անդամներին և դատավորներին (արբիտրներին) չի ներկայացվում որևէ հատուկ հագուստ կրելու պահանջ, սակայն անհրաժեշտ է կրել ֆորմալ հագուստ:

Ոչ մի թիմ իրավունք չունի ծանոթանալու կամ այլ կերպ տեղեկանալու հակառակորդ թիմերի գրավոր աշխատանքներին, բացառությամբ ցանկացած մրցափուլում սահմանված իրենց ապագա մրցակիցների հայցվոր/պատասխանող հայցադիմումների: Չնայած վերը նշվածին, թիմին թույլատրվում է կիրառել այլ թիմերի հայցադիմումներում և բանավոր ելույթներում օգտագործված այն փաստարկներն ու տեղեկությունները, որոնց տվյալ թիմը օրինական կարգով տեղեկացել է որևէ մրցափուլի ընթացքում:

Արտակարգ հանգամանքներում, երբ այս կամ այն թիմը չի ներկայանում որևէ մրցափուլի, մրցույթի կազմակերպիչը, տասնհինգ (15) րոպե սպասելուց հետո, կարող է թույլատրել, որպեսզի մրցափուլն ընթանա միակողմանիորեն: Միակողմանի ընթացակարգում, ներկա գտնվող թիմը ներկայացնում է իր բանավոր հայտարարությունը, որը սովորական կարգով գնահատվում է արբիտրների կողմից: Մրցափուլին չներկայացած թիմը տուգանվում է:

4. ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԿԱՐԵՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Խնդրում ենք հիշել բանավոր փուլի հետևյալ հիմնական կանոնները.

1. Բանավոր փուլերի ողջ ընթացքում դատավորները (արբիտրները) չպետք է շփվեն որևէ թիմի անդամի, ղեկավարի կամ դասախոսի հետ՝ նույնիսկ եթե ճանաչում են նրան: Այլ մրցույթների փորձը ցույց է տալիս, որ նման դեպքերը միշտ առիթ են տալիս հակառակորդ թիմի մասնակիցներին և ղեկավարներին (հատկապես, երբ պարտվում են) մեղադրելու տվյալ դատավորին (արբիտրին) կողմնակալ լինելու և գնահատելու մեջ: Հետևաբար՝ խնդրում և հորդորում ենք զերծ մնալ որևէ թիմի անդամի, ղեկավարի, դասախոսի, ղեկանի, ռեկտորի և այլ ներկաների հետ շփվելուց՝ պատճառաբանելով, որ մրցույթի կանոններն արգելում են Ձեզ շփվել վերջիններիս հետ:

2. Յուրաքանչյուր մրցափուլից հետո խնդրում ենք վերադառնալ դատավորների (արբիտրների) սենյակ:

3. Հարցեր կարող են տրվել միայն այն բանախոսին, որը տվյալ պահին ելույթ է ունենում:

4. Մեկ թիմի ժամանակը ավելացնելու դեպքում պետք է նաև ավելացնել մյուս թիմի ժամանակը՝ հավասարության սկզբունքը պաշտպանելու համար:

5. Ոչ մի դեպքում չպետք է ցույց տալ, որ Դուք ավելի շատ հավանում եք այս կամ այն թիմի կամ բանախոսի ելույթը, կամ ավելի ճիշտ եք համարում այս կամ այն թիմի/բանախոսի դիրքորոշումը: Դա կարող է արտահայտվել միայն գնահատականի տեսքով՝ բանավոր փուլի ավարտից հետո:

6. Պետք է փորձեք երկու թիմերին էլ տալ հավասար քանակությամբ հարցեր:

7. Բանավոր փուլի ավարտից հետո դատավորները (արբիտրները) կարող են միասին քննարկել բանախոսների ելույթները, յուրաքանչյուր ելույթի դրական կամ բացասական կողմերը, սակայն յուրաքանչյուր դատավոր (արբիտր) ազատ է ինքնուրույն գնահատելու բանախոսների ելույթները: Հետևաբար՝ հնարավոր են դեպքեր, երբ դատավորների (արբիտրների) միավորներն էապես տարբերվեն իրարից:

8. Բանավոր փուլի ավարտից և գնահատելուց հետո, թիմերի մասնակիցներին կրկին հրավիրեք դատասենյակ և խրախուսական խոսքեր ասեք՝ առանց որևէ կոնկրետ թիմին կամ մասնակցին դիմելու: Կարող եք խորհուրդներ տալ հետագա փուլերի համար, առանց որևէ կերպ բացահայտելու Հուշագրում առկա տեղեկատվությունը և առանց միավորները հայտարարելու:

9. Բանախոսներին հարցեր տալու կամ որևէ պարզաբանում ստանալու համար կարող եք ասել «Հարգելի բանախոս»:

10. Բանախոսների ժամանակը խնայելու համար հորդորում ենք տալ կարճ հարցեր: Խրախուսելի է նաև տալ «այո» կամ «ոչ» պատասխաններ պահանջող հարցեր:

11. Բանախոսներին չի թույլատրվում Ձեզ տեղեկացնել, թե իրենք, որ համալսարանն են ներկայացնում (Կանոնների 3 կետ) և Դուք չպետք է իրենց հարցնեք այդ մասին՝ թիմերի անանունությունը և գնահատման անաչառությունը պահպանելու նպատակով:

12. Եթե բանախոսը ներկայացնում է մի փաստ, որը Ձեր կարծիքով Խնդրում առկա չէ, ապա կարող եք բանախոսին խնդրել Ձեզ տեղեկացնել, թե Խնդրի որ էջի որ տողում է նշված այն փաստը, որի մասին նա նշեց: Թիմերն իրավունք չունեն նոր փաստեր հորինել կամ դուրս գալ ներկայացված փաստերի շրջանակներից:

13. Դուք ցանկացած ժամանակ կարող եք ընդհատել բանախոսի ելույթը և հարցեր տալ կամ պարզաբանումներ պահանջել, սակայն պետք է հաշվի առնել, որ բանախոսն արդեն նախապատրաստած ելույթ ունի և չափից դուրս հարցեր խորհուրդ չի տրվում տալ՝ քանզի

Ելույթի ժամանակը սահմանափակ է: Ամեն դեպքում, բանախոսը պետք է կարողանա հարցերին պատասխանել, ապա նորից վերադառնալ իր ելույթին և պարտադիր կերպով ավարտել այն մինչև ժամանակի ավարտը: Սա շատ կարևոր է: Բանախոսները պետք է կարողանան ճիշտ կառավարել իրենց ժամանակը, և անրադառնալով ելույթի առավել կարևոր մասերին՝ այն հասցնել իր տրամաբանական ավարտին:

Բոլոր հարցերի դեպքում խնդրում ենք գանգահարել 055 511-103; 055 562-512; 51-22-47 հեռախոսահամարներով: